ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա - Կիլիկիահայության առաջին շփումները խաչակիրների հետ

Կատարող – Մարիետա Մարատի Եղիկյան

Գյումրու համար 26ավագ դպրոց,Պատմություն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

Բովանդակություն

Ներածություն----------1

Գլուխ 1 .Կիլիկիահայության առաջին շփումները խաչակիրների հետ--------2

Գլուխ 2. Պատմա-համեմատական մեթոդի կիրառումը կիլիիահայության

առաջին շփումները խաչակիրների հետ թեմայի շրջանակներում----------13

Վերջաբան----------17

Օգտագործված գրականություն----------18

Ներածություն

Մեծ Հայքից դուրս գոյացած Հայկական իշխանություններից բոլոր փորձություններին դիմագրավեց միայն Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը,որը ծանր ու երկարատև պայքար մղելով խաչակիրների,բյուզանդացիների ու սելջուկների դեմ կարողացավ պահպանել իր գոյությունը:

Հայ իշխաններից Ռուբենը հենվելով Կիլիկիայի լեռնային շրջաններում բնակություն հաստատած հայերի վրա,1080թ. ապստամբում ու ազատագրում է Լեռնային Կիլիկիան:Ռուբենին հաջորդում է Կոստանդինը,որի ժամանակ էլ Արևելքում երևացին խաչակիրներիը:Խաչակրությունը ձեռնարկելիս Ուրբանոս պապի հայտնի և անհայտ խնդիրներն էին՝ արևելյան քրիստոնյաների ազատագրումը սելջուկներից,Երուսաղեմի և Սուրբ գերեզմանի վերանվաճումը մահմեդականների ձեռքից,Եվրոպային սպառնացող թուրքական առաջխաղացման խափանումը և Արևմուտքում Հռոմեական եկեղեցու հեղինակության բարձրացումը:Սկզբնական շրջանում հայ իշխանները սկսեցին համագործակցել խաչակիրների հետ,վերացնելով Դաշտային Կիլիկիայի տարածքում տեղակայված թուրքական կայազորերը:Բացի այդ հիմնադրելով Եդեսիայի կոմսությունը և Անտիոքի իշխանապետությունը,խաչակիրները Կիլիկիայի արևելյան և հարավային սհմաններից հեռացրեցին մահմեդական երկրից սպառնացող անմիջական վտանգը,սակայն մյուս կողմից՝ ոչնչացնելով Մերձեփրատյան երկրամասի հայկական իշխանությունները,հետագաայում նրանք այդ սահմանները ավելի խոցելի դարձրին:

Հետազոտակաան աշխատանքի նպատակն է հենվելով մեր ունեցած և թեմային առնչվող նյութերի ու տեղեկութնունների վրա՝

-ներկայացնել թե ինչպիսի պայմաններում և որտեղ է ստեղծվել Կիլիկյան հայկական թագավորությունը

-ներկայացնել խաչակրած արշավանքների առաջացման պատճառները

- վերլուծել թեմայի դասավանդման մեթոդիկայի առաննահատկությունները, ինչպես նաև պատմա-համեմատական մեթոդի կիրառումը տվյալ թեմայի շրջանակներում

-օգտագործել կրթական չափորոշիչով սահմանված լեզվական գրագիտությունը, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունները հասնել անհրաժեշտ վերջնարդյունքի:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից,երկու գլուխներից, վերջաբանից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1.Կիլիկիահայության առաջին շփումները խաչակիրների հետ

Մեծ Հայքից դուրս գոյացած հայկական իշխանություններից բոլոր փորձություններին դիմագրավեց միայն Կիլիկիայի Ռուբինյան իշխանությունը,որը կարողացավ իր գոյությունը պահպանել՝ երկարատև ու ծանր պայքար մղելով բյուզանդացիների ,սելջուկների ու խաչակիչների դեմ:

Երբ Բյուզանդական կայսրությունը զավթեց Մեծ Հայքի տարածքները և բնազրկեց նրա տիրակալներին,Վասպուրականի,Անիի և Կարսի թագավորները նրանից կալվածքներ ստացան Կապադովկիայում:Նրանց հետևեց հայկական մի ստվար գաղթականություն:Այդ գաղթականների թիվը մեծացավ Մանազկերտի ճակատամարտից հետո,որը տեղի ունեցավ 1071 թ.:Այս ճակատամարտում Բյուզանդիան պարտություն կրեց և ճակատամարտից հետո ավելի ուժգնացան սելջուկյան ճնշումները:Իսկ երբ թուրքերը հաստատվեցին նաև Կապադովկիայում,հայ գաղթականները ապաստան փնտրեցին ավելի հեռուներում՝Կիլիկյան Տավրոսի լեռներում,Մելիտենեի շրջակայքում:Անիի վերջին թագավոր Գագիկ 2-ը հաստատվել էր Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պիզու քաղաքում:1079թ. նա սպանվեց և նրա ազգականներից կամ ենթականերից մեկը՝ Ռուբենը1,ապստամբեց և հաստատվեց Կիլիկիայի հյուսիսային լեռնաշխարհում Բարձրբերդում:Ռուբենին համարել են Գագիկ 2-ի ազգական,որպեսզի վերագրեն նրան արքայական ծագում:Երբ Ռուբենը 1080թ.հենվելով Կիլիկիայի լեռնային շրջաններում բնակություն հաստատած հայերի վրա ,ապստամբում է Բյուզանդացիների դեմ ու ամրանում Կոռոմոզոլ կոչված բերդում,որը գտնվում էր Կառոմոսոս գետի ափին,կարճ ժամանակում հայերը կարողանում են ազատագրել Լեռնային Կիլիկիան ու Բյուզանդացիներին վտարել այդ վայրերից:Այսպիսով,Ռուբեն իշխանը (1080-1095թթ..)հիմք դրեց հայկական իշխանությանը Կիլիկիայում:Այդ իշխանությունը Ռուբենի անունով էլ պատմության մեջ կոչվեց Ռուբինյան իշխանություն(1080-1198թթ..),իսկ հետո դարձավ Ռուբինյան թագավորություն:

Ռուբեն իշխանին հաջորդեց որդին Կոստանդին 1-ը (1095-1100թթ..):Սրա ժամանակ հայկական իշխանությունը Կիլիկիայում ավելի ամրապնդվեց:1098թ.Կոստանդինը գրավեց Լեռնային Կիլիկիայի կարևորագույն հենակետերից մեկը՝ Վահկա բերդը ,որը և դարձավ նրա իշխանության և ընտանիքի նստավայրը:Կոստանդինը ավելի ընդարձակեց իր իշխանության սահմանները ի հաշիվ թե՛ սելջուկների և թե՛ բյուզանդացիների:

Նույն կերպ, Օշին անունով մի ուրիշ հայ իշխան,որը ծագում էր Արևելյան Հայաստանից,1072-1080թթ..միջև ընկած ժամանակահատվածում եկավ ու հաստատվեց Լամբրոնի բերդում,Կիլիկյան Տավրոսի կատարներին,որտեղ էլ նա հիմնեց Հեթումյան իշխանական ապա արքայական տունը:

Հայ քաջասիրտ իշխանների շարքում,որոնք կարողացան կողմնորոշվել ու ճիշտ ժամանակին օգտվեցին Բյուզանդական կայսրության խորտակումից, գրավեցին հարավ- արևելյան Անատոլիայի այս վերջին միջնաբերդերը,քանի որ թուրքերի դեմ պայքարում ստիպված էին ապավինել դրանց,առաջին կարգի տեղ է զբաղեցնում Փիլարտոս Վրահամիոսը (Վահրամ,Վարաժնունի):Այս զորավարը Ռոմանոս Դիոգենես կայսեր օրոք ծառայել էր Բյուզանդիային:Ամուր հաստատվելով Մարաշում,որի կառավարումը ժամանակին Ռոմանոս Դիոգենեսը հանձնարարել էր նրան,նա այդ բնակավայրում ձևավորեց մի ուժեղ իշխանություն,որտեղից նա վտարեց բյուզանդական պաշտոնյաներին,քանի որ ինքն ի վիճակի էր այն պաշտպանել թուրքական հարձակումներից:

Այսպիսով, Փիլարտոս Վարաժնունին տիրեց Կիլիկյան երեք մեծ քաղաքներին՝Տարսոնին,Մսիսին և Անավարզային:1077թ. նա իր ենթակա կրտսեր հայ զորականներից մեկին Վասիլին ուղարկեց բյուզանդացիներից խլելու Եդեսիան :Վեց ամիս տևած պաշարումից հետո Եդեսիայի բնակիչների մեծ մասը հայեր,ապստամբեցին Բյուզանդացի կառավարիչի դեմ և քաղաքը հանձնեցին Վասիլին:Վասիլի մահից հետո, 1083թ. Փիլարտոսն անձամբ տիրեց Եդեսիային:Երբ 1078թ. մարտին սպանվել էր Անտիոքի վերջին կառավարիչ Վասակ Մագիստրոսը,տեղի ազնվականությունը վախենալով սելջուկյան վտանգից,և կայազորը՝ մեծամասնությունը հայերից էր բաղկացած,օգնության էին կանչել Փիլարտոսին,որը և զավթել էր քաղաքը:Եվ կարելի է ասել Մանազկերտի

ճակատամարտին հետևած այս վճռորոշ տարիներին նոր Հայաստանի հիմքեր էր դնում Փիլարտոս Վահրամը:Եվ ապագա Ռուբինյան ու Հեթումյան թագավորության ծրագիրն էր,որ գծում էր նա:Ի դեպ Փիլարտոս Վահրամի ստեղծած պետությունն ավելի ընդարձակ էր,քան հետագայում Ռուբինյանների և Հեթումյանների ձևավորած թագավորությունը: Հենվելով ստվար հայկական գաղթականության վրա և ամուր կերպով հաստատվելով Տավրոսում,այն միաժամանակ ընդգրկում էր Կիլիկիան,Մելիտենեն,Եդեսիան և Անտիոքը:

Բայց նշենք,որ սելջուկները չէին կարող թույլ տալ,որ այս հայկական իշխանությունը ամրապնդվեր:Օգտվելով Փիլարտոսի մի բացակայությունից և նրա ընտանիքի պառակտումից,1085թ.հունվար-փետրվար ամիսներին հաջողվեց դավաճանությամբ բացել տալ Անտիոքի դարպասները,թեև շատ կարճ ժամանակով,քանզի 1098թ. հունիսի 3-ին, այն ազատագրվեց խաչակիրների կողմից:Բայց ի տարբերություն Անտիոքի,Մելիտենեն պահպանվեց:Փիլարտոսի ենթականերից մեկը՝ Գաբրիելը,հպատակություն հայտնելով սելջուկներին կարողացավ պահպանել Մելիտենեն:

1095թ.Ֆրանսիայի Կլերմոն քաղաքում Ուրբանոս II պապը հրավիրեց ժողով,որտեղ էլ հավաքվեցին բազմահազար հավատացյալներ:Պապը կոչ արեց դիմել զենքի <<տիրոջ գերեզմանը փրկելու համար>>:Ուրբանոս II պապի խոսքը Կլերմոնի ժողովում. <<Երկիրը,որտեղ բնակվում եք դուք,բոլոր կողմերից սեղմված է ծովով ու լեռնաշղթաներով,և դրա համար էլ այժմ նեղ է դարձել ձեր բազմամարդության պատճառով,հարստություններով այն առատ չէ և հազիվ է հաց հասցնում իր մշակողներին:Դրանից էլ տեղի է ունենում այն,որ դուք կրծում ու խժռում եք միմյանց,պատերազմներ մղում ու մահացու վերքեր հասցնում:Իսկ այժմ կարող է դադար առնել այդ ատելությունը:Ճամփա ընկեք Երուսաղեմ՝ դեպի սուրբ գերեզմանը,2 խլեք այդ երկիրը անհավատներից և ձերը դարձրեք:Այդ հողում <<մեղր ու կարագ է հոսում >>:Երուսաղեմը երկրիս ամենաբարեբեր մարգարիտն է>>:Հավաքի մասնակիցները մեծ ոգևորվածությամբ ընդունեցին և անմիջապես սկսեցին խաչեր կարել իրենց հագուստներին:Այստեղից էլ առաջացել է արշավանքների մասնակիցների անվանումը՝խաչակիրներ:Խաչակրություն բառը<<խաչակրաց արշավանք>>նշանակությամբ եվրոպական լեզուներում սկսել է

գործածվել XVIIIդարից:Իսկ Արևելքում խաչակիրները հայտնի էին ֆրանկ անունով,ինչը բացատրվում է նրանով ,որ առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցները հիմնականում ֆրանսիացի էին:

Ուրբանոս II պապի խոսքը Կլերմոնի ժողովից հետո ծավալված եռանդուն քարոզչության շնորհիվ,լայն արձագանք գտավ հասարակության բոլոր շերտերում:Ոգևորությունն այնքան համատարած էր և ցանկացողների թիվը այնքան մեծ էր,որ Ուրբանոսը ստիպված էր որոշ սահմանափակումներ մտցնել հավաքագրվողների կազմում մասնավորապես չխրախուսելով ծերերի,կանանց և երեխաների մասնակցությունը:Եվ ահա,1096թ.ի վեր՝ խոշոր բարոններից,ասպետներից,եկեղեցականներից,հողազուրկ գյուղացիներից ու թափառաշրջիկներից կազմված խաչակրաց խայտաբղետ բազմությունը,տարբեր ժամանակներում ու տարբեր ճանապարհներով շարժվեց դեպի Արևելք,այդպիսով ծնունդ տալով մի փոթորկալի գործընթացի,որը պետք է տևեր շուրջ 200տարի և ունենար հետևյալ գլխավոր հանգրվանները.

1.Առաջին խաչակրաց արշավանք (1096-1099թթ..),որը գլխավորում էին ֆրանսիական ու նորմանական խոշոր բարոնները,և որի արդյունքում Արևելքում ստեղծվեցին շուրջ 4լատինական պետություններ՝Երուսաղեմի թագավորությունը,Անտիոքի իշխանապետությունը,Եդեսիայի և Տրիպոլիի կոմսությունները:

2.Երկրորդ խաչակրաց արշավանքն (1147-1149թթ..),ձեռնարկված Մոսուլի աթաբեկ Զանգիի կողմից Եդեսիայի գրավման(1144թ.) վրեժը լուծելու նպատակով:Լիակատար ձախողությամբ ավարտված այս արշավանքի առաջնորդներն էին գերմանական կայսր Կոնրադ III և ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս VII:

3.Երրորդ խաչակրաց արշավաանքն (1189-1192թթ..),որի նպատակն էր վերանվաճել Սալահեդդինիի կողմից 1187թ. գրավված Երուսաղեմ քաղաքը:Այս արշավանքը,որի հրամանատարներն էին Ֆրիդրիխ Շիկամորուս կայսրը,Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը և Ֆրանսիային թագավոր Ֆիլիպ-Օգյուստը,թեր չհասավ իր բուն նպատակին,բայց նրա շնորհիվ վերականգնվեց Երուսաղեմի

թագավորությունը՝Աքքա կենտրոնով,ինչպես նաև հիմնադրվեց Կիպրոսի լատինական թագավորությունը:

4.Չորրորդ խաչակրաց արշավանքն(1204թ.),որն ի տարբերություն նախորդ երկուսի,առաջնորդում էին ոչ թե եվրոպական մեծ երկրների թագավորները,այլ մի քանի խոշոր բարոններ:Այդ արշավանքը մահմեդական Արևելք ուղղվելու փոխարեն,շրջվեց դեպի Բյուզանդիա:

5.Հինգերորդ խաչակրաց արշավնքն (1217-1221թթ..) Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենացու,Ավստրիայի դուքս Լեոպոլդ VI և պապական նվիրակ Պելագիոսի առաջնորդությամբ իրականացված այս արշավանքի արդյունքում գրավվեց Եգիպտոսի Դամիատ նավահանգիստը,որը սակայն գրեթե անմիջապես կրկին ընկավ Այուբյան սուլթանների ձեռքը:

6.Վեցերորդ խաչակրաց արշավանք(1228-1229թթ..),որը միայնակ գլխավորում էր գերմանական կայսր Ֆրիդրիխ II:Վերջինիս հաջողվեց զուտ դիվանագիտական միջոցներով Եգիպտոսի Այուբյաններից կորզել Երուսաղեմ քաղաքը,որն այս անգամ խաչակիրների ձեռքում մնաց 15տարի(1229-1244թթ..):

7.Յոթերորդ խաչակրաց արշավանք(1248-1254թթ..),որի ընթացքում այն առաջնորդող ֆրանսիացի Լյուդովիկոս IX թագավորը,հինգերորդ արշավանքի օրինակով,գրավվեց Դամիատ քաղաքը,բայց շուտով ջախջախիչ պարտություն կրելով կրկին կորցրեց այն:

-5-

Առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցները բաժանվում էին չորս հիմնական խմբի:

Առաջին խումբը,որը կազմված էր հիմնականում լոթարինգացիներից,հս.ֆրանսիացիներից և գերմանացիներից գլխավորում էր ներքին Լոթարինգիայի դուքս Գոդֆրուս Բուլոյնացին:Նրան ուղեկցում էին իր եղբայր Բալդուին Բուլոյնացին և ազգական Բալդուին Բուրգացին:

Երկրորդ խումբը կազմված էր Իտալիայի նորմաններից,որոնց հրամանատարն էր Բոհեմունդ Տարենտացին:Բոհեմունդի հիմնական զինակիցը նրա քեռորդի Տանկրեդն էր:

Երրորդ և ամենաբազմամարդ խումբը ներկայացնում էին հարավային ֆրանսիայի բնակիչները՝ Ռայմոնդ Սենժիլցու գլխավորությամբ:

Չորրորդ խումբը կազմված էր հս. Ֆրանսիացիներից՝դուքս Ռոբերդ Նորմանդացու,կոմս Ռոբերտ II ֆլանդրացու և կոմս Ստեփան Բլուացու հրամանատարության ներքո:

Թվարկված բարոնների շարքում իր հարստությամբ,ֆեոդալական նվիրապետության աստիճանակարգում զբաղեցրած դիրքով և զինված ուժերի թվաքանակով ամենաազդեցիկը Ռայմոնդ Սենժիլցին էր:Նրա հեղինակության ամրապնդմանը նպաստում էր նաև այն հանգամանքը,որ նա Ուրբանոս Պապի մտերիմ մարդկանցից էր:

Առաջին խաչակրության մասնակիցների շրջանակը,սակայն չէր սահմանափակվում միայն բարոնների և նրանց ուղեկցող ասպետների դասով:Նրանցից անկախ և ժամանակով նրանցից առաջ դեպի Սուրբ Երկիր ճանապարհ էր ընկել այսպես կոչված աղքատների կամ ամբոխի խաչակրությունը՝ ժողովրդական քարոզիչներ Պետրոս Ճգնավորի և այլոց գլխավորությամբ:Այդ խումբը,կազմված մեծ մասամբ անզեն և չքավոր ուխտավորներից,որոնց գերմանիայում միացել էին նաև որոշ մանր ֆեոդալներ և ասպետներ,ըստ մասնագետների հասնում էին 20000հոգու:

Առաջին խաչակրաց արշավանքի մասնակիցների ընդհանուր թվաքանակը չէր անցնում հարյուր հազարից՝ներառյալ Պետրոս ճգնավորի գլխավորած ամբոխը և խաչակրաց բանակներին ուղեկցող ոչ զինյալ ուխտավորների՝ կանանց,ծերերի,երեխաների բազմությունը:Բուն բանակի թվաքանակը կազմում էր շուրջ 4200-4500 հեծյալ և 30000 հետևակային:

1096թ.ապրիլին ժողովրդական խաչակրությունը երկու ալիքով մեկնելով Ֆրանսիայից Գերմանիայի և Հունգարիայի ճանապարհով հասավ

-6-

Բյուզանդիա:Հուլիս-օգոստոսին այդ խաչակրությունն արդեն ամբողջությամբ հասել էր Կոստանդնուպոլիս:Չսպասելով խաչակրաց բուն բանակների ժամանմանը,այդ խայտաբղետ ամբոխը անցավ Փոքր Ասիա և հոկտեմբերի 21-ին,թուրքերի հետ առաջին իսկ լուրջ բախման ժամանակ,Նիկիայի մոտերքում գլխովին ջախջախվեցին:

1096թ.նոյեմբերից մինչև 1097թ. ապրիլ ընկած ժամանակամիջոցում տարբեր ճանապարհներով Կոստանդնուպոլիս հասան նաև խաչակիրների մյուս խմբերը:Գոդֆրուս Բուլոյնացին ընտրել էր համարյա նուն երթուղին,որով ընթացել էր ժողովրդական խաչակրությունը:Ռայմոնդ Սենժիլցին,կտրելով Ալպյան լեռնաշղթան,իջել էր հս.Իտալիա և Ադրիատիկ ծովի հս. ափերով մտել Բալկաններ:Համարյա նույն երթուղով էր անցել նաև Բոհեմունդ Տարենտացին:

Ապրիլի վերջին-մայիսի սկզբներին խաչակրաց բանակները մեկը մյուսի հետևից մեկնեցին Կ.Պոլիս:Մայիսի 6-ին սկսեցին Նիկիայի պաշարումը,որն այդ ժամանակ Փոքր Ասիայի սելջուկյան սուլթանության մայրաքաղաքն էր:Հերակլեայում Տանկրեդը և Բալդուին Բուլեյնացին սեպտեմբերի կեսերին բաժանվեցին հիմնական բանակից և առանձին փոքրիկ զորախմբերով Կիլիկյան դռներով իջան Դաշտային Կիլիկիա:Տանկրեդը,որը 3 օրով առաջ էր ընկել Բալդուինից,ուներ միայն 100ասպետ և 200հետևակային,իսկ Բալդուինը՝ 500ասպետ և 2000 հետևակային:

1097թ.սեպտեմբերի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերը Տանկրեդը և Բալդուինը նվաճեցին Դաշտային Կիլիկիայի բոլոր մեծ քաղաքները՝ Տարսոնը,Մսիսը,Ալեքսանդրեթը:

Բալդուինը 1098թ. փետրվարի 6-ին 80 կամ 60 ասպետների ուղեկցությամբ ժամանեց Եդեսիա և մի քանի ամիս անց մատնելով հայ կառավարիչ Թորոսին ամբոխի հաշվեհարդարին,զավթեց իշխանությունը:1098թ.մարտին 10-ին նա հռչակվեց Եդեսիայի կոմս,այդպիսով հիմնադրելով համանուն կոմսությունը,որը խաչակրաց առաջին պետությունն էր Արևելքում:

Անտիոքին տիրելու համար Բոհեմունդ Տարենտացու և Ռայմոնդ Սենժիլցու միջև ծագած հակամարտությունն ավարտվեց առաջինի հաղթանակով,որը և հռչակվեց Անտիոքի պրինց,դառնալով Արևելքի երկրորդ խաչակրաց պետության հիմնադիրը:

1099թ. հուվարին խաչակրաց բանակը վերսկսեց դեպի Երուսաղեմ ընթացող արշավանքը:Այն գլխավորում էր Ռայմոն Սենժիլցին,Գոդֆրուս Բուլոյնացին,Տանկրեդ Բալդուինն ու Բոհեմունդ Տարենտացին մնացել էին իրենց նորաստեղծ պետություններում:Խաչակրաց բանակը ամռան սկզբին հասավ Երուսաղեմ և ավելի

քան մեկամյա պաշարումից հետո,հուլիսի 15-ին այն գրավեցին:Արևելքում հիմնադրվեց խաչակրաց երրորդ պետությունը:

-7-

Ռայմոնդ Սենժիլցն էլ գրավելով (1103թ.)Տրիպոլիի և Բեյրութի միջև գտնվող Ջիբեյլ (հնում Բիբլոս) նավահանգիստը,նա հիմնադրեց մի նոր խաչակրաց պետություն,որը Տրիպոլիի նվաճումից հետո պիտի կոչվեր 1109թ.Տրիպոլիի կոմսություն:

Խաչակրաց այս չորս պետությունները իրավական առումով բացարձակապես անկախ էին միմյանցից:Բոլոր պետություններն ունեին իրենց սեփական դրամը,օրենսդրությունը,դատական համակարգը և եկեղեցական կառույցը:

Բալդուին Բուլոյնացին՝ Գոդֆրուս Բուլոյնացու եղբայրը,և Տանկրեդը՝Բոհեմունդի զավակը,1097թ.սեպտեմբերի 14-ի շուրջ լքեցին խաչակիրների զանգվածը և գնացին թուրք-սելջուկներից գրավելու Կիլիկիո նահանգը:Այս երկու, այսպես ասած սեպուհները խաչակրության հանձնառած բարոններից ամենաարկածախնդիրներն էին:Թե՛ մեկի,և թե՛ մյուսի համար,խաչակրած սրբազան արշավանքը ոչ այլ ինչ էր քան քաղաքական ձեռնարկում,այսինքն տիրանալ լավագույն տարածքներին,ավելի հարստանալ:Իրերը դրական տեսանկյունից դիտելով այս երկու բարոնները անտարակույս կարծում էին,որ սխալ է ընթանալ Կապադովկիա-Կեսարիա-Մարաշ ճանապարհով:Ուստի խուսափելով դեպի Կապադովկիա ուղղված երթից,այս երկու արկածախնդիր բարոնները Հերակլեայից ուղակի իջան Կիլիկիո բարեբեր դաշտը:

1097թ.հայկական<<տարրն>>էր,որ հաջողության հասնելու ամենամեծ հնարավորությունն ուներ:Բյուզանդացիների և մահմեդականների միջև ընթացած պատերազմներից Կիլիկիան վերաբնակեցվել էր ստվար հայկական գաղթականությամբ:Արդեն 1077-1083թթ..այն մաս էր կազմում Փիլարտոսի տիրույթների:Փիլարտոսի կարճատև տիրապետության անկումից հետո սելջուկ-թուրքերը իրեն ենթարկեցին դաշտային Կիլիկիայի մեծ մասը,մասնավորապես Մսիս և Տարսոն քաղաքները:Բայց հայ իշխանները պինդ հաստատված էին Տավրոսի կիրճում:Շուրջ 1080թ.այդ իշխաններից մեկը՝Ռուբենը,Հայաստանի վերջին թագավոր

Գագիկ II նախկին զորականը հաստատվել էր լեռնային ամենամատչելի կետերից մեկում՝ Բարձրբերդում՝Սսից հս.-արևմուտք:Ռուբենի որդին՝ Կոստանդին I(1092-1100թթ..),ընդարձակեց իր իշխանությունը,քշելով թուրքերին այդ շրջաններից և գրավելով Վահկան,որը գտնվում էր Անտիտավրոսում:Վահկան դարձավ ծանրակշիռ ձեռքբերում,որովհետև դառնալու էր այն մեկնակետը,որտեղից Ռուբինյան նվաճումը մի օր տարածվելու էր ողջ Կիլիկիայի վրա:

Լեռների մի ուրիշ հայ տիրակալ,որը նույնպես դեր պիտի խաղար խաչակրության պատմության մեջ Հեթումյան գերդաստանի հիմնադիր Օշին ասպետն էր՝Լամբրոնի տերը:Որպես տարագիր մի հայ,շուրջ 1072թ. Գանձակի

-8-

շրջակայքից հասել էր մինչև Տավրոս և հաստատվել էր Լամբրոն բերդում,մի արծվաբույն,որտեղից նա իշխում էր Տարսոնա գետի վերին հովտին: Ահա սա էր Կիլիկիայի վիճակը,երբ Տանկրեդը և Բալդուին Բուլոյնացին հասան այդ երկիրը:Տանկրեդը առաջինը ժամանեց:Բալդուինը կապված էր Բագրատ անունով մի հայ իշխանի հետ:Երկուսն էլ իրենց հույսը կապում էին հայկական տարրի օգնության հետ:Տանկրեդը կանխելով Բալդուինին,գնաց պաշարեց Տարսոնը:Նրա առաջին հոգսը եղավ հայկական բնակչության հետ բանակցությունների սկսումը:Սանկրետի բանակցությունները ավարտին մոտ էին,երբ Բալդուին Բուլեյնացին իր հերթին ժամանեց՝ ուղեկցությամբ իր բախտը նրա հետ կապած լոթարինգացի մի քանի բարոններից,որոնց թվում էին նրա զարմիկ Բալդուին Բուրգացին,Ռոյնալդ Տուլացին և Պետրոս Ստենացին:Այս նոր հակառակորդների ժամանումը ահի մատնեց թուրքական կայազորին,որն օգտվեց մի գիշերվա հարմար առիթից և փախուստի դիմեց:Մյուս օրը հայերն ու հույները հրավիրեցին ֆրանկ զորահրամանատարներին՝ տեր կանգնելու իրենց քաղաքին:Տանկրեդը և Բալդուինը մտադիր էին Կիլիկիան նվաճել որպես սեփականություն,քանի որ խաչակրության մասնակիցներից յուրաքանչյուրը ձգտում էր հարստության և նորանոր բարեբեր տարածքների:Բալդուին Բուլոյնացու հարաբերությունները Բագրատի հետ այդ ժամանակներից արդեն նրա մոտ բացահայտել էր մի ճշմարիտ հայկական քաղաքականություն,որի պսակը պիտի հանդիսանար Եդեսիայի կոմսության հիմնադրումը:Բայց երկու խաչակիր զորահրամանատարների զորքերը հեռու էին հավասար լինելուց:Տանկրետը կատաղությունը սրտում թողեց Տարսոնը Բալդուինին և մեկնեց Ադանա:Բալդուինի հեղինակությունը ամրապնդվեց,երբ Կիլիկիա Մերսինի ծովածոց հասավ ֆլամանդացի և Դանիացի խաչակիրների մի ուժեղ նավատորմ,որի հրամանատարն էր նախկին ծովահեն Գինեմեր Բուլոյնացին:Երբ խաչակիր դարձած այս ծովահենը իմացավ,որ գործ ունի իր տիրոջ որդու հետ,ափ իջնելուն պես իրեն հայտարարեց նրա վասալը և առաջարկեց իր աջակցությունը:Իսկ այդ ընթացքում

Տանկրեդը գնացել էր Ադանա և Մսիս 1097թ. սեպտեմբերի վերջ-հոկտեմբերի սկիզբ:Ըստ մեզ հասած տեղեկության Ադանան թուրքերից հենց նոր գրավել էր Վելֆ անունով բուրգունդացի մի ասպետ,որը որպես առաջամարտիկ անջատվել էր բուն զորքից և եկել էր բախտ որոնելու:Տանկրեդի խնդրանքով Վելֆը թույլ էր տվել,որ նա մտնի Ադանա պահեստավորվելու:Իսկ այլ տվյալների համաձայն Ադանան պատկանում էր Օշին հային՝ Լամբրոնի տիրոջը,որն էլ կանչել էր Տանկրեդին:Ինչ էլ լինի պարզ է որ Տանկրեդը կարողացավ պարեն հայտայտել Ադանայում և բարեկամական հարաբերությունների մեջ մտնել Օշին Լամբրոնացու հետ,եթե իհարկե Օշինը Ռաուլ Կաենացու մոտ հիշատակվող Ուրսինիոս հայն է:Ուրսինիոսն իսկապես դիմեց Տանկրեդին,որպեսզի նա գա և թուրքերից գրավի Մսիս քաղաքը,որի բնակչությունն

-9-

ամբողջությամբ հայ էր:Մեկ ցերեկ և մեկ գիշեր տևած պաշարումից հետո Մսիս թուրքական կայազորն փախուստի դիմեց և հայերը բացեցին դարպասները Տանկրեդի առջև1097թ.սեպտեմբերի վերջ:Ինչպես երևում է խաչակիրների հաջողության գործում նշանակալի է եղել հայ տարի դերը:

Հազիվ էր Տանկրեդը թուքերից խլել Մսիսը,երբ Բալդուինը դուրս հորդալով Տարսոնից հայտնվեց քաղաքի դիմաց:Բնական է Տանկրեդը նրա առջև փակեց քաղաքի դարպասները,և նրանք կարողացան հաշտվել,իսկ Բալդուինն տեղեկանալով որ իր եղբայր Գոդֆրուսն որսի ժամանակ վիրավորվել է գնավ նրան փրկելու:Նա միացավ հիմնական բանակին,որն այդ ժամանակ գտնվում էր Մարաշում1097թ.հոկտեմբերի 15 շուրջ:Իսկ Տանկրեդը ավարտեց Դաշտային Կիլիկիայի նվաճումը:

Կիլիկիայից անցնելով խաչակիրները մտան Ասորիք:1098թ.գրավեցին Եդեսիան Ուռհա և այստեղ հիմնեցին առաջին լատինական իշխանությունը Արևելքում:Շուտքվ Անտիոքում հիմնվեց խաչակրաց երկրորդ իշխանությունը:1099թ.խաչակիրները մտան Պաղեստին,որտեղ էլ հիմնեցին Երուսաղեմի թագավորությունը:1109թ. գրավելով Տրիպոլին խաչակիրները հիմնեցին իրենց չորրորդ իշխանությունը:Այսպիսով գոյացան չորս քաղաքական միավորումներ՝Եդեսիայի կոմսությունը,Անտիոքի իշխանությունը,Տրիպոլիի կոմսությունը և Երուսաղեմի թագավորությունը:

Խաչակիր իշխանությունները մեծ ազդեցություն ունեցան Կիլիկիայի հայկական պետականության ճակատագրի վրա:

Շուտով խաչակիրները ստիպված եղան Բյուզանդիայի հետ կնքած հաշտության պայմանագրով հրաժարվել Դաշտային Կիլիկիայից ու Հս Ասորիքից:Սանկրեդը որպես Անտիոքի դուքս ճանաչելու էր Բյուզանդիայի

գերիշխանությունը:Նման պայմաններում Կոստանդինի որդիներ Թորոսին1100-1129թթ.. և Լևոնին 1129-1137թթ.. վիճակված էր պայքարել Բյուզանդիայի դեմ Դաշտային Կիլիկիան ազատագրելու համար:

Թորոս Ա 1104թ.իր իշխանությանը միացրեց Սիս և Անազարբա քաղաքները և այսպիսով ավելի ընդարձակեց Ռուբինյան իշխանությունը:Թորոսը նաև վրեժ լուծեց հույն Մանդալե եղբայրներից,որոնք ավազակաբար բռնել էին հայոց Գագիկ Բ թագավորին և սպանել:1111թ.Թորոսը հարձակվում է Մանդալե եղբայրների վրա,գերի վերցնում և սպանում:

12-րդ դարի 30-ական թվականներին Կիլիկիայի հայկական իշխանության ամենավտանգավոր թշնամիներից էին Անտիոքի խաչակիրները,ուր Բոհեմունդ Բ-ի մահից հետո իշխանությունն անցել էր Ռայմոնդ Պուատիեի ձեռքը,որն իր

-10-

նախորդների նման փորձեց նվաճել Դաշտային Կիլիկիան:

Արդեն 1136թ.Ռայմոնդը՝ անկարող զենքի ուժով ընկճելու հայոց եռանդուն ու քաջակորով իշխան Լևոնին,դիմեց խորամանկության:Հրավիրելով Լևոնին Անտիոք,գերեց նրան ու ազատ արձակեց միայն 60000դահեկան փրկավճար,ինչպես նաև Մամեստիա,Ադանա և Սարվանդիքար քաղաքները ստանալուց հետո:Ազատվելով գերությունից Լևոնը կարողացավ հետ խլել Կիլիկիայից խաբեությամբ վերցված հիշյալ քաղաքները:

Բյուզանդական Հովհան Կոմնենոս կայսեր (1118-1143թթ..) սպառնալիքը ստիպեց Կիլիկիային և Անտիոքի դքսությանը հաշտություն կնքել և դաշնակցել ընդդեմ Բյուզանդիայի:

1137թ.կայսրը Փոքր Ասիայի Մելիքղազի Դանիշմանդյան իշխանի դեմ կազմակերպած մի շարք հաջող արշավանքներից հետո ձեռնարկեց իր մեծ արշավանքը դեպի Կիլիկիա և Ասորիք:Գրավելով Տարսոնը,Ադանան,Անազարբան կայսրը մտադիր էր շարժվել Վահկա բերդի վրա,նպատակ ունենալով նվաճել նրա լեռնային մասը ու վերջ տալ Հայկական իշխանությանը:Թեև Վահկացիները համառ դիմադրություն էին ցույց տալիս,բայց ստիպված էին զիջել թշնամուն ուժերի առավելության պատճառով:

Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում 1137թ.մի տարով դադարեց գոյություն ունենալուց,սակայն շուտով՝1145թ.նորից վերականգնվեց շնորհիվ այն հանգամանքի,որ Կիլիկիայում հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը:Հովհան կայսրը մահացավ 1143թ.Կիլիկիայում որսորդության ժամանակ:Հովհան կայսրին հաջորդեց որդին՝Մանուելը(1143-1180թթ..),որն ի տարբերություն հորը,ուշադրությունը սևեռեց եվրոպական ճակատի վրա:Այդ

ժամանակ սրվել էր հակամարտությունը խաչակիրների ու Կիլիկիայի միջև:1143թ. Անտիոքի խաչակիրները նորից հարձակվեցին Կիլիկիայի վրա և գրավեց որոշ վայրեր:

1142թ.մահացավ Լևոն Ռուբինյանը,իսկ նրա որդի Թորոսը կարողացավ հաստատավել Կիլիկիայում և իր շուրջը համախմբել հայ բնակչությանը,նա կարողացավ ընդարձակել երկրի սահմանները:Թորոսի հաջողությունը պայմանավորված էր արտաքին երկու նպաստավոր հանգամանքով:Նախ՝Անտիոքի խաչակիրները պարտություն կրելով Հալեպի ամիրայից,ապա՝Եդեսիան ընկել էր թշնամու ձեռքը,իսկ Բյուզանդիան զբաղված էր Արևմուտքում ռազմական գործողություններով և սկսեց պատերազմել Թորոսի դեմ:Թորոսը գերեց բյուզանդացիների հետ համագործակցած Լամբրոնի իշխան Օշինին:Թորոսը ստիպված եղավ պաշտպանել Լամբրոնը:Դաշտային Կիլիկիան ազատագրելու

-11-

համար Թորոսը Բյուզանդացիների դեմ պայքար սկսեց:Այդ պայքարում նրան աջակցեցին Ստեփանե և Մլեհ եղբայրները:

Թորոս Բ-ին հաջորդեց իր փոքրահասակ որդի Ռուբենը (1169-1170թթ..):Սակայն մի տարի անց գահին տիրեց Մլեհը:Ռուբենը իր խնամակալի հետ ուղարկվեց Անտիոք,հետո Հռոմկլա ուր և մահացավ:Ըստ երևույթին,Մլեհն այն քաղաքական գործիչն էր,որը հասկացավ,թե խաչակիրների<<բարեկամությունը>>մեկուսացնում է Ռուբինյանների պետությունը:Մլեհի գլխավոր նպատակը Հայկական Կիլիկիայի բացարձակ անկախության ձեռք բերումը:1173թ.Բյուզանդացիներից ազատագրեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը:Նա հաջող մարտեր մղեց Երուսաղեմի խաչակիր թագավորի և Անտիոքի դուքսի դեմ:Մլեհը երկրի մայրաքաղաքը դարձրեց Սիսը՝1173թ.,որը մինչև 1376թ. մնաց որպես Կիլիկիայի Հայկական պետության վարչա-քաղաքական կենտրոն:

Մլեհի մահից հետո իշխանությունը անցավ նրա եղբորորդի Ռուբեն Գ(1175-1187թթ..):Դաշտային Կիլիկիայից Բյուզանդացիներին վտարելուց հետո Ռուբեն Գ փորձեց իրեն ենթարկել Լամբրոնի Հեթումյաններին,սակայն ապարդյուն,քանի որ Լամբրոնի իշխանը դաշինք կնքելով Անտիոքի դուքսի հետ դրդեց նրան հարձակվել Ռուբեն Գ վրա:Տեսնելով որ զենքի ուժով ոչնչի չի հասնի,այսինքն չի կարողանա հայերից խլել Դաշտային Կիլիկիան:Անտիոքի դուքսը դրդեց խորամանկության:1185թ. նա Ռուբեն Գ հրավիրեց Անտիոք իբր բարեկամորեն,բայց նրան բանտարկեց,որից հետո ներխուժեց Կիլիկիա,բայց հանդիպես Ռուբենի եղբոր Լևոնի գլխավորած հայկական զորքի ուժեղ դիմադրությանը ու ստիպված եղավ նահանջել:Խաչակիրներին զիջելով Ադանան ու վճարելով մեծ փրկագին Ռուբեն Գ ազատվեց գերությունից:Իշխանության գլուխ անցած Լևոն Բ(1187-1219թթ..)շուտով

վերադարձրեց Ադանան:Այժմ արդեն Սելևկիայից մինչև Ալեքսանդրետ ձգված Միջերկրական ափը գտնվում էր հայերի ձեռքին:Կիլիկիայի և խաչակիրների միջև պայքարը լուծվեց հօգուտ հայերի:Լևոն Բ 1203թ. վերջապես իր գերիշխանությանը ենթարկեց նաև Լամբրոնի Հեթումյաններին:

Այսպիսով,Կիլիկյան հայերի երկարատև պայքարը Բյուզանդացիների սելջուկների և խաչակիրների դեմ վերջացավ փայլուն հաղթանակով:

-12-

Գլուխ 2.Պատմա-համեմատական մեթոդի կիրառումը կիլիիահայության առաջին շփումները խաչակիրների հետ թեմայի շրջանակներում

Պատմահամեմատական մեթոդ պատմական գիտելիքներ ձեռք բերելու և ներկայացնելու ամենատարածված միջոցներից է: Կարելի է ասել, որ առանց համեմատության չի կարող իրականացվել ոչ մի գիտական հետազոտություն: Համեմատության եղանակը պատմական ճանաչողությունում օգտագործվել է դեռևս անտիկ դարաշրջանում, երբ պատմագիրներն առաջնորդվել են պատմության շրջափուլային (ցիկլիկ) փոփոխման հայեցակարգով: Այդ հայեցակարգում համեմատությունը հանդես էր գալիս որպես փակ, կրկնվող շրջափուլերի մասին պատկերացումների ստեղծման միջոցներից մեկը: Դրանում գործնականում կարող էին համեմատվել ցանկացած դեպք, երևույթ, գործընթաց: Պետք է նկատել, որ պատմահամեմատական մեթոդի առաջացման սկզբնական շրջանում բացակայում էր հասարակական երևույթների որակական որոշակիության պատկերացումը: Նոր ժամանակներում պատմության շրջափուլային փոփոխման ուսմունքը փոխարինվեց

Վիկոյի շրջապտույտի տեսությամբ: Այն հիմնված էր առանձին դեպքերի և ամբողջական դարաշրջանների համեմատության վրա: Դրանցում նա վեր է հանել տարբերությունները, թեև հիմնականում՝ ի վնաս անհատականի, փնտրել է նմանը, կրկնվողը, օրինաչափը: Նա զրկել է պատմության շրջապտույտի գաղափարը երևույթների համադրման ռացիոնալորեն հիմնավորված չափանիշից: Այդ առումով լուսավորական պատմագրության բնորոշ գծերից է այն, որ ունի նման չափանիշ: Դա համաշխարհային պատմության միասնականության վերաբերյալ համոզմունքն է՝ որպես միասնական և անփոփոխ մարդկային բնության արդյունք: Լուսավորիչները պատմահամեմատական մեթոդն օգտագործում էին շատ լայն. համեմատում էին նույնիսկ այն, ինչը սկզբունքորեն համեմատել չէր կարելի: Համեմատության չափանիշը միասնական և անփոփոխ մարդկային բնությունն էր: Այդպիսի ըմբռնումը խանգարում էր երևույթների անընդմեջ փոփոխվող աշխարհում ճանաչելու առանձնահատուկը, յուրօրինակը, մտածողությունն ուղղորդում էր նմանի, ընդհանրականի բացահայտմանը: Ուստի լուսավորական շրջանում պատմահամեմատական մեթոդի կիրառումը հանգեցրել է մակերեսային համեմատությունների և համանմանությունների (անալոգիաների) առաջադրմանը:Նկատենք, որ պատմահամեմատական մեթոդի էությունը կախված է պատմական իրականության բնույթից: Այն մի կողմից անհատական է, անկրկնելի, մյուս կողմից գործ ունենք նմանի, ընդհանրականի հետ: Չէ՞ որ մարդիկ և հասարակական կյանքն ու միջավայրն ունեն ոչ միայն տարբերություններ, անհատականություն, այլև ընդհանրություններ, նմանություններ: Պատմահամեմատական մեթոդը թույլ է տալիս համադրման, համեմատության միջոցով անհատականի մեջ բացահայտել ընդհանրականն ու նմանը:

Համեմատությունն արդյունավետ կլինի այն դեպքում, եթե գործ ունենանք նույն կարգի, նույն հիմքերով, առավել շատ ընդհանրական, էական ներքին հատկանիշներ ունեցող օբյեկտների, երևույթների հետ: Հասարակական կյանքը ոչ թե դեպքերի պարզ ընթացք է, այլ որակական ամբողջությունների, փուլերի դինամիկ հաջորդափոխություն: Ուստի պատմական ճանաչողության այդ փուլերի առանձնացումը կարևոր խնդիր է: Այդպիսի ամբողջությունների, փուլերի բացահայտումը ևս իրականացվում է համեմատության միջոցով, սակայն որոշ

մտածողներ գտնում են, որ դա գիտական ճանաչողության, վերլուծության առանձնահատուկ մեթոդ է: Այն անվանում են տիպաբանացման մեթոդ: Դրա խնդիրն է օբյեկտներին, երևույթներին, գործընթացներին բնորոշ էական հատկանիշների միջոցով կարգավորել, խմբավորել դրանք որպես որակապես որոշակի տիպեր, դասեր, խմբեր:

Ուսուցիչը պետք է դիտարկի առկա փաստերը՝ նախագծելով դրանց կանխատեսելի և անկանխատեսելի զարգացումներն ու հետևանքները: Յուրաքանչյուր մեթոդի ճիշտ ընտրությունը պատմաբան-ուսուցչի համար ելակետային է: Դասապրոցեսում հաջորդական և համակարգված կերպով կիրառվող այս կամ այն մեթոդը ենթադրում է փաստերի ամբողջական հետազոտում՝ դրանց պատմական, ժամանակագրական և տարաբնույթ այլ զարգացումներին զուգընթաց: Դասապրոցեսի խթանման, իմաստավորման և կշռադատման (ԽԻԿ) փուլերում կիրառել ուսուցման փոխներգործուն մի շարք մեթոդներ: ԽԻԿ-ը ուսուցման ժամանակակից մեթոդների համակարգ է, որի միջոցով ապահովվում է դասապրոցեսի փուլային կազմակերպումը: Այդ փուլերն են.

• խթանման,

• իմաստավորման,

• կշռադատման:

Փուլերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը հարկ է դիտարկել պատմական գիտելիքների յուրացման արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Պատմության դասապրոցեսի խթանման փուլի առանցքային նպատակներն են՝

• նոր նյութի վերաբերյալ սովորողների շրջանում առկա գիտելիքների կամ տեղեկացվածության մակարդակի բացահայտումը,

• նրանց ակտիվ մասնակցության ապահովումը նյութի քննարկման գործընթացին,

• սովորողների իմացական և ճանաչողական մղումների գործնական ակտիվացումն ու խթանումը, գիտելիքի ձեռքբերման պահանջմունքի ձևավորումը:

• օգտագործելով լեզվական գրագիտությունը, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունները հասնել անհրաժեշտ վերջնարդյունքի:

Դասապրոցեսի այս փուլում առավել նպատակահարմար է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝

- ուղեղային մտագրոհը,
- պրիզման,
- ձնագնդի մեթոդը

Դասի խթանման փուլում կիրառելով «ուղեղային մտագրոհ» մեթոդը՝ պատմաբան-ուսուցիչը նախ և առաջ հստակեցնում է դասի թեման, նպատակն ու լուծելիք խնդիրները, այնուհետև մշակում է «լավագույն տարբերակի» ընտրության չափանիշներն ու նախագծում դասի ընթացքը՝ դասարանի քննարկմանը ներկայացնելով որևէ պատմական հիմնախնդիր: Նա սովորողներից ակնկալում է խնդրի լուծման տարաբնույթ տարբերակներ, որի համար խթանում է նրանց ստեղծագործական, իմացական և ճանաչողական ակտիվությունը: Քննարկմանն ակտիվորեն մասնակցում են դասարանի բոլոր անդամները՝ հանդես գալով մերթ մտքերի և գաղափարների առաջադրողների, մերթ՝ քննադատների դերում: Այս մեթոդի կիրառման պայմաններում ուսուցչի կողմից դասապրոցեսում գործադրվում են գործունային և անձնակենտրոն մոտեցումներ:

«Մտագրոհ» մեթոդն ունի կիրառման որոշակի փուլեր: Դրանք են՝

• գաղափարների շտեմարանի ձևավորման,
• ձևավորված գաղափարների վերլուծման,
• ստացված արդյունքների մշակման:

Դասի խթանման փուլում նպատակահարմար է նաև «Պրիզմա» փոխներգործուն մեթոդի կիրառումը: Այս մեթոդը նպաստում է սովորողների ազատ և անկաշկանդ մտածողության զարգացմանը: Պրիզմայի հիմնական նպատակն է ներկայացվող պատմական երևույթի, փաստի, հասկացության, իրադարձության կամ գաղափարի վերաբերյալ սովորողների ենթագիտակցության մեջ զուգորդված կապերի արձանագրումն ու բացահայտումը: «Պրիզմա» ակտիվ մեթոդն ունի գծագրական դասակարգչի ձև, ինչի շնորհիվ սովորողների մտքի զարգացման ընթացքը դառնում է ակներև ու պատկերավոր: Սույն մեթոդի կիրառումը ապահովում է դասապրոցեսի հաջող մեկնարկը:

Ուսուցիչը հնարավորություն է ունենում սովորողների մեջ ձևավորելու մի շարք կարևորագույն աշխարհայացքային գաղափարներ և հասկացություններ:Ուսուցիչը յուրաքանչյուր դասընթացի համար պետք է իրականացնի ընթացիկ նախապատրաստում, որն իր մեջ ընդգրկում է դասի անցկացման պլանը: Պլանում պետք է տրված լինեն.

-դասի նպատակները

-դասի անցկացման հիմնական մեթոդը

-դասի անցկացման լրացուցիչ մեթոդը (այն դեպքում, եթե սովորողները պատրաստ չլինեն հիմնական մեթոդի կիրառմանը),

-դասի բովանդակության վերաբերյալ ուսուցուղական նյութերը (թեմայի վերաբերյալ քննարկումներ, գրատախտակին աղյուսակների կազմում ու լրացում և այլն),

-դասի ժամանակ օգտագործվող պարագաները կամ դասի կահավորումը,

-նոր նյութի հաղորդում,

-սովորողների կողմից նյութի ընկալման մակարդակի ստուգումը,

-գնահատման համակարգը,

-տնային աշխատանքի հանձնարարումը:

Վերջաբան

Ռուբինյանների հաջողության գլխավոր պայմաններից մեկը այն էր,որ պատմա-քաղաքական բարդ իրադրության մեջ նրանք շատ խելացիորեն օգտագործում էին հարևան թշնամի պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունները և ամրապնդում Կիլիկիո Հայկական իշխանությունը:Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական հաջողության գլխավոր ու վճռական պատճառը այն էր,որ 11-12-րդ դարերում հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը և իրենց ձեռքն էին վերցրել երկրի ինչպես տնտեսական,այնպես էլ քաղաքական կյանքի ղեկը:

Հայոց պետականությունը համարյա նույքան միատարր էր նաև կրոնական առումով,եթե նկատի ունենանք,որ առնվազն մինչև 12-րդ դարի սկիզբը հայերի մեջ

ինչ-ինչ տարաձայնությունների առկայությամբ հանդերձ,դավանաբանական պառակտություններ գոյություն չունեին:Նշված հանգամանքները Կիլիկիան շեշտակիորեն առանձնացնում էին Մերձավոր Արևելքի մնացյալ պետություններից,որոնք բոլորն էլ այս կամ այն չափով բազմաձև և բազմաբովանդակ էին:

Պատմա-համեմատական մեթոդի կիրառումը տվյալ թեմայի շրջանակներու մօգտագործել լեզվական գրագիտությունը, սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունները կարողացանք տեսնել անհրաժեշտ վերջնարդյունքը:

Օգտագործված գրականություն

1.Մատթեոս Ուռհայեցի<<ժամանակագրություն>> Եր.1973թ.

2.Հայ ժողովրդի պատմություն,ԽՍՍՀ Գիտ.ակադեմի հրատ.III.1976թ.

3.Լևոն Տեր-Պետրոսյան <<Խաչակիրները և հայերը >>հատոր I Եր.2005թ.,հատոր II Եր. 2007թ.

4. Ալբերտ Ղազարյան

<<Պատմության առարկան, գործառույթները և հիմնական մեթոդները>> Հոդված

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2017 № 3 (24), էջ 45-57 |